

Արձանագրություն N 2

Առողջապահության նախարարության <<Դատաբժշկական գիտագործնական կենտրոն>> ՊՈԱԿ-ի վերազինման նպատակով գազային քրոմատոգրաֆ-մասսպեկտրոմետրի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«21» «Հոկտեմբեր» 2019թ.

Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գ. Ղուկասյան

Հանձնաժողովի անդամներ

Ռ. Մնացականյան,

Հ. Բալյան

Հանձնաժողովի քարտուղար

Հ. Սարգսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Գ. Ղուկասյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման հարցմանը պատասխանելու և armeps համակարգում հրապարակելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի հրավերի պարզաբանման հարցմանը պատասխանելու armeps համակարգում հրապարակելու մասին

(Գ. Ղուկասյան)


18.10.2019թ. հրավերի վերաբերյալ ներկայացվել են պարզաբանման հարցումներ:

Որոշվեց պատասխանել հարցումներին և հրավերի պարզաբանման մասին հայտարարությունները /կցվում են/ հրապարակել armeps համակարգում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝




Գ. Ղուկասյան

Անդամներ՝




Ռ. Մնացականյան



Հ. Բալյան

Քարտուղար՝



Հ. Սարգսյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34»**

Առողջապահության Նախարարության «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման նպատակով գազային քրոմատոգրաֆ-մասսպեկտրոմետրի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 18-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 21-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Հարգելի Գործընկեր, խնդրում ենք պարզաբանել ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34 ծածկագրով մրցույթի գնման առարկա հանդիսացող «Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու»-ի տեխնիկական բնութագիրը, ըստ որի պահանջվում է սարքը կիրառել «Սինթետիկ, կիսասինթետիկ, բուսական ծագման թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի որոշման համար», նշվածից հանգում ենք հետևության, որ սարքը կիրառվելու է նշյալ նյութերի որոշման նպատակով, ինչը չի պահանջում բազմակի մեթոդներ, որի համար անհրաժեշտ չէ աշտարակի և ֆիլամենտի բազմակի փոխարինում, քանի որ օգտագործվելու է ընդամենը մեկ մեթոդ: Բնութագրում նշված «Վակուումային շյուզ, իոնային աղբյուրի քարտիջի արտահանման հնարավորությամբ, ինչպես նաև քրոմոտոգրաֆիկ աշտարակի փոփոխման հնարավորությամբ առանց վակուում անջատելու» պահանջը էական լինել չի կարող, այն բնորոշ է միայն մեկ արտադրող ընկերությանը, որը արհեստական խոչընդոտ է ստեղծում մրցույթի մասնակիցների համար, սահմանափակելով գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը:

Հաշվի առնելով, որ տեխնիկական բնութագրում առկա են բազմաթիվ այլ պահանջներ՝ բնորոշ միայն մեկ արտադրող ընկերությանը, առաջարկում ենք վերանայել գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, վերացնելով սահմանափակումները և բավարարել օրենքով սահմանված մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Պարզաբանում N 1:

«Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ը գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի օգնությամբ իրականացնելու է սինթետիկ, կիսասինթետիկ, բուսական ծագման թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի փորձաքննություններ, ինչպես նաև գիտական մշակումներ: Նշված նյութերի ցանկը բավականին ծավալուն է և իր մեջ ներառում է ինչպես բնեռային, այնպես էլ ոչ բնեռային ցնդող նյութեր: Ուստի աշտարակների փոփոխությունը առանց վակուումի իջեցման՝ հնարավորություն թույլ կտա տնտեսել ժամանակ և խուսափել համակարգային սխալներից, ինչպես նաև բազմակի վակուումի միացում-անջատումը կբերի համակարգի ավելի շուտ շարքից դուրս գալուն, ինչից հնարավոր է խուսափել վակուումային շյուզի օգնությամբ: Ավելին, ժամանակակից գազի քրոմատոգրի մասսպեկտրաչափ արտադրող ընկերությունները ունեն նշված տեխնոլոգիաները և նշված բնութագրերը առնվազն համապատասխանում են Shimadzu ընկերության NEXIS QP 2020NX , և Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 մոդելներին և այլ արտադրողների մոդելներին, և հակառակը պարզաբանմամբ ապացուցված չէ: Ինչ վերաբերվում է վակուումային փականին, նշենք, որ գրեթե բոլոր գազի քրոմատոգրի մասսպեկտրաչափ արտադրող ընկերությունները հնարավորություն ունեն համալրեն իրենց

համակարգը NO Vent, Vent free

adaptors մասերով և տեխնիկական բնութագրի նշված կետով բավարարեն պահանջին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊԶԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Սարգսյանին:

Հեռախոս՝ (060) 80-80-03-1804

Էլ. փոստ՝ hsargsyan@moh.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «**ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34**»

Առողջապահության Նախարարության «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման նպատակով գազային քրոմատոգրաֆ-մասսպեկտրոմետրի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 18-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի հոկտեմբերի 21-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34 ծածկագրով մրցույթի 1-ին չափաբաժնի՝ "Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու", չափորոշիչները համապատասխանում են միայն Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 Single quadrupole սարքավորման չափորոշիչներին, որոնցից են՝

«Մասս սպեկտրաչափ կվադրոպոլային անալիզատորով:

Իոնիզացիայի տիպը:

Էլեկտրոններով (Էլեկտրոնային հարված):

Մասս սպեկտրերի գրանցման տեսակները՝

- ամբողջական ժամանակային ինտերվալում, Full scan:

- ընտրված իոններով, SIM:

- ընտրողական Full scan/SIM:

Իոնային աղբյուրը՝

Էլեկտրոնային իոնիզացիայի ջերմաստիճանը 50-350 °C:

Մասսաների ստաբիլությունը՝

Շեղումը ոչ ավել քան 0,1 Ա.Մ.Մ./48 ժ:

Մասսաների ինտերվալը՝

Ոչ նեղ քան 1.2 - 1100 Ա.Մ.Մ.:

Սկանավորման արագությունը

ոչ պակաս 20000 Ա.Մ.Մ./վ:

Ինտերվալի սկանավորման արագությունը 125 Ա.Մ.Մ.ինտերվալում, Full scan ռեժիմում ոչ քիչ 97 սկան/վ:

Աշտարակի թերմոստատը՝

• Աշխատանքային ջերմաստիճանը +5-ից +450 °C:

• LN2 սառեցումով +100 ից 450 °C:

• CO2 սառեցումով +50 ից 450 °C:

Պահման ժամանակի վերարտադրողականություն ոչ ավել քան - 0.008% կամ 0.0008 թուպե:

Մակերեսի վերարտադրողականություն - < 0,5%RSD:

Ջեռոցի ջերմաստիճանի աճի առավելագույն առժեքը +125 °C/րոպե:

Ջեռոցի սառեցման ժամանակը - ոչ քիչ քան 4 թուպեում 450°C-ից մինչև 50°C սառելու համար:

Ավտոմատացված ներարկման համակարգ

Ներարկչի ծավալը ոչ ավել քան 10մկլ, 5 և 0.5մկլ հնարավորությամբ:

Մաքսիմալ ներարկման ծավալը ոչ քիչ քան 5մկլ:

Մինիմալ ներարկման ծավալը ոչ ավել քան 0.01մկլ:

Սանդղակավորումը ոչ ավել քան 0.01մկլ:

Նմուշների սրվակները ոչ քիչ քան 8 հատ 2մլ»

Խնդրում եմ պարզաբանեք՝

1. Հնարավոր է փոխել մրցույթի չափորոշիչներն այնպես, որ դրանք համապատասխանեն 1-ից ավելի արտադրողի նմանատիպ սարքավորման չափորոշիչներին:

Պարզաբանում N 1:

«Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ը գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի օգնությամբ իրականացնելու է սինթետիկ, կիսասինթետիկ, բուսական ծագման թմրանյութերի, հոգեներգործուն նյութերի փորձաքննություն, ինչպես նաև գիտական մշակումներ: Նշված նյութերի ցանկը բավականին ծավալուն է, իսկ նմուշների քանակը անկանխատեսելի է, ուստի կենտրոնին անհրաժեշտ է հուսալի, ժամանակակից դատաբժշկական հետազոտություններում լայն կիրառելիություն ունեցող վստահելի համակարգ, ինչպես նաև մատակարարի կողմից մեթոդների ներդրման աշխատանքների լիարժեք կատարման արդյունքներ:

ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34 ծածկագրով մրցույթի 1-

ին չափաբաժնի՝ "Գազի քրոմատոգրի մաս սպեկտրաչափի համալրող մասերի և ծրագրերի հավաքածու" չափորոշիչները համապատասխանում են առնվազն 2 արտադրողների՝ SHIMADZU ընկերության GCMS QP2020NX և Thermo Fisher Scientific ընկերության ISQ 7000 Single quadrupole ժամանակակից սարքավորումների բնութագրերին: Ուստի տեխնիկական բնութագրերի վերանայման անհրաժեշտություն չենք տեսնում:

Հարցադրում N 2: Հնարավոր է մրցույթին ներկայացնել այլ արտադրողի նմանատիպ սարքավորում, որի չափորոշիչները կտարբերվեն մրցույթում նշված չափորոշիչներից, բայց ամբողջությամբ կլուծի անալիտիկ առաջադրանքը:

Պարզաբանում N 2:

Հայտով ներկայացրաց սարքավորման չափանիշները կգնահատվեն բավարար միայն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի չափանիշներին համապատասխանելու դեպքում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/34» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Հասմիկ Սարգսյանին:

Հեռախոս՝ (060) 80-80-03-1804

Էլ. փոստ՝ hsargsyan@moh.am